ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱ Ն

Օ Ր Ե Ն Ք Ը

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 23. Նախադպրոցական կրթության բնագավառում Կառավարության լիազորությունները

1. Նախադպրոցական կրթության բնագավառում Կառավարությունը՝

1) հիմնադրում է պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ.

2) հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը.

3) հաստատում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը.

4) հաստատում է այն հիվանդությունների ցանկը, որոնց առկայությունը խոչընդոտում է մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

5) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի, ամենամյա արձակուրդի առանձնահատկությունները.

6) հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը.

7) սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը.

~~8) սահմանում է առանձին կատեգորիայի նախադպրոցական ուսումնական հաստատությունների և ուսումնական հաստատությունների առանձին խմբերի ծախսերի ուղղիչ գործակիցները և նորմատիվները տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից մինչև օգոստոսի 31-ը.~~

9) սահմանում է պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները.

10) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ լիազորություններ: